Դիտորդի վարքագծի կանոններ

Ես՝ _____ս

Ներգրավվելով «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի դիտորդական առաքելության մեջ պարտավորվում եմ

- Ինձ հայտնի դառնալուն պես Դիտորդական առաքելությանը տեղեկացնել թեկնածուների կամ ընտրական գործընթացի այլ մասնակիցների հետ բարեկամական, ընկերական կամ գործնական կապերի մասին, որոնք կարող են ազդել դիտորդի անկախության վրա կամ մեկնաբանվել որպես այդպիսին

հանդիսանալով
_____
հասարակական կազմակերպության դիտորդ՝ պարտավորվում եմ

- Ներկայանալ ընտրական հանձնաժողովների նախագահներին, գրանցվել և տեսանելիորեն կրել դիտորդի վկայականը
- Հարգել ՀՀ գործող օրենսդրությունը
- Լինել անկուսակցական
- Չլինել կողմնակալ և դիտորդություն իրականացնելիս չառաջնորդվել քաղաքական հայացքներով
- Հագուստի կամ ունեցած պարագաների վրա որևէ քաղաքական ուժի խորհրդանիշ չկրել
- Լինել հարգալից ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների հանդեպ
- Չհայտնել անձնական տվյալներ
- Դիտարկման ընթացքում վիճաբանության մեջ չմտնել և ցուցումներ չտալ ընտրական գործընթացի որևէ մասնակցի
- Չխանգարել նախընտրական գործընթացներին և չխոչընդոտել ընտրական որևէ փուլի աշխատանքներին:
- Ընտրական հանձնաժողովի անդամներից, վստահված անձանցից և ընտրողներից չընդունել որևէ բան, ինչը կարող է ազդել դիտարկողի անկախության և ազատության վրա կամ մեկնաբանվել որպես այդպիսին
- Առանց համակարգողին տեղեկացնելու չլքել դիտարկման հանձնարարված տարածքը
- Դիտարկումն իրականացնել թափանցիկ կերպով
- Արձանագրված խախտումների վերաբերյալ ստացված տվյալները չփոխանցել երրորդ անձանց
- Հարցազրույցներ տալ միայն համակարգողի թույլտվությամբ
- Չօգնել որևէ ընտրողի, բացառությամբ կյանքի կամ առողջության համար անհետաձգելի օգնություն ցուցաբերելու հնարավոր դեպքից
- Համագործակցել Առաքելության գործընկեր դիտորդի և շրջիկ դիտորդների հետ
- Անհրաժեշտության և փոխադարձ համաձայնության դեպքում համագործակցել այլ, բայց անկողմնակալ դիտորդների հետ

- Ոստիկանության ծառայողներին դիմել միայն տեղամասային կենտրոնից դուրս եղած խախտումների առնչությամբ կամ եթե կա դիտորդի անձին կամ գույքին իրական սպառնալիք
- Աջակցության կամ խորհրդատվության համար դիմել առաքելության իրավաբանին
- Հասկանալ, որ այս վարքականոնի որևէ գիտակցված խախտում վարկաբեկում է ոչ միայն իրեն, այլև ընտրությունների դիտարկման առաքելությունն ամբողջությամբ:

Դիտորդ՝ _____ _____

ստորագրություն Անուն, ազգանուն